ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ (K86Mkrtchyan@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

2020ի սկզբից աշխարհին պատուհասած համավարակը դարձել է պետութիւնների արձագանգման եւ կարողութեան փորձութիւն-ստուգատես: Յօդուածի նպատակն է գնահատել, թէ ինչպէս է իրականացուել պետական կառավարումը եւ առողջապահական համակարգի վերահսկողութիւնը առողջա-մեկուսացման միջոցառումների մեկնարկի պայմաններում Այսրկովկասի երկրներում: Յօդուածում դիտարկւում են արտակարգ դրութեան պայմաններում առաջացած խնդիրները եւ թէ ինչ հետեւանքներ են դրանք ունեցել իշխանութիւնների գործունէութեան, կազմակերպական եւ կառավարման ունակութիւնների դրսեւորման ու արձագանգման տեսանկիւնից:

Ի տարբերութիւն նախորդ ճգնաժամերի, համավարակն առաջացնում է իշխանութիւնների իրաւասութեան պահանջ, վնասում յարմարաւէտութիւնը, տնտեսական շահերը, քաղաքական որոշումներ իրականացնելու կարողութիւնը:

Մինչեւ համավարակի սկսուելը Այսրկովկասի կառավարութիւնները նախաձեռնել էին կաշառակերութեան դէմ պայքար, որը եղել է Վրաստանում եւ Հայաստանում իրականացուած Վարդերի եւ Թաւշեայ յեղափոխութիւնների շարժիչ ուժը: Համավարակը ստիպեց, որ հանրային կեանքում մեծանայ պետական հիմնարկներից ակնկալուող արդիւնաւէտ աշխատանքի պահանջարկը: Համավարակը ոչ միայն «չէր շտապում», այլ նաեւ իր դիրքերն ամրապնդեց: Այդպիսով վերջինս ստիպեց հաշուի նստել իր հետ ըստ էութեան որպէս ոչ միայն եւ ոչ այնքան առողջապահական, որքան նաեւ քաղաքական ու տնտեսական նոր գործօն: Ուստի, այդ կառավարութիւնները ստիպուած էին ակամայ տեղի տալ եւ փոփոխութիւններ մտցնել իրենց քաղաքական օրակարգերում: Կարծես, համավարակը որոշ առումով փոխարինեց իշխանութիւնների քաղաքական ընդդիմախօսներին իր իրական մարտահրաւէրներով:

ԱԿՆԱՐԿ ՀԱՄԱՎԱՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Համավարակների ազդեցութիւնը ընկերային, քաղաքական եւ տնտեսական փոփոխութիւնների վրայ ուսումնասիրուած է, ինչպէս ժանտախտի հետեւանքները միջնադարեան Եւրոպայում: Ժանտախտը նպաստեց ընկերային կառոյցի փոփոխութիւններին, աւատատիրական յարաբերութիւնների սասանմանը եւ դրամատիրութեան վերելքին: Բնակչութեան կտրուկ անկումը դարձաւ ընկերային շարժունակութեան բարձրացման պատճառ եւ գործնականում արհեստաւորների միութիւնները, որպէս կա-

ռոյցներ, իրենց շարքերը սկսեցին համալրել «օտարներով» կամ այլ խաւերի անդամներով: Աշխատուժի թանկացումը բերեց արտադրութեան մեքենայացմանը: Գնաճի պայմաններում իշխանութիւնները փորձեցին մտցնել ցածր խաւերի բարձր եկամուտների դէմ միջոցառումներ: Խռովութիւնները տարածուեցին ամբողջ Եւրոպայում, ապագայ *բուրժուազիայ*ի դերը սկսեց աճել[1]: Աւելին, ժանտախտը դարձաւ Ոսկէ Հորդայի թուլացման պատճառներից մէկը[2]:

ԺԹ.-Ի. դարերում հնդկախտի համաճարակը 7 ալիք է ունեցել: Այդ բռնկումներն աշխարհում խորը հետք են թողել կեանքի բոլոր ոլորտների վրայ, որի վերաբերեալ պահպանուել են ուշագրաւ վկայութիւններ նաեւ հայ ժամանակակիցների մօտ:

Մշակ թերթի 1892ի Յունիսի 6րդ համարի առաջին էջում մտահոգութիւն է հնչում, որ հնդկախտը սաստկանում է Պարսկաստանի տարբեր կողմերում, մինչդեռ իշխանութիւնները որեւէ քայլ չեն ձեռնարկում[3]: Խմբագրականը մտավախութիւն է յայտնում, որ նման աղքատ երկրում համաճարակի դէմն առնել հնարաւոր չի լինի, եւ զոհերը խիստ շատ կը լինեն, ուստի միակ լուծումը հնարաւորինս շուտ շփումները նուազեցնելն է:

Հայ ժամանակակիցների յուշերում կան տեղեկութիւններ խուճապի տարածման եւ իշխանութիւնների ձեռնարկած անբաւարար քայլերի վերաբերեալ: Նոյն թուականի Յունիսի 20ին Նար-Դոսն իր նամակներից մէկում գրում է. «*Խոլերան եկաւ Բաքու, սկսեց կոտորած անել, ամէնքն սկսեցին գլխապատառ փախչել այնտեղից եւ երկու շաբաթից աւելի էր, որ ամբողջ անդրկովկասեան երկաթուղու վրայ ոչ մի տեղ կարանտին չկար*»[4]: Նոյն տարուան Յուլիսի 18ին Յովհաննէս Թումանեանը Աւետիք Արասխանեանին հասցէագրած նամակում գրում է. «*Ամսի 15ին Թիֆլիսից դուրս եկանք դէպի Լօռի, բայց բանից դուրս եկաւ, որ փորձանքից փախած՝ պատուհասի մէջ ընկանք*»[5]: Ըստ Թումանեանի՝ Լօռիում հնդկախտից մահեր էին գրանցուել Ջալալօղլիում (ներկայումս՝ Ստեփանաւան), Վորոնցովկայում (Տաշիր) եւ Ճոճկանում:

---

[1] David Herlihy, *The Black Death and the Transformation of the West*, edited by Samuel K. Cohn, Harvard University Press, 1997: (https://doi.org/10.2307/j.ctvjghwgp (մատչում՝ 20.09.2020):

[2] Uli Schamiloglu, "The Impact of the Black Death on the Golden Horde: Politics, Economy, Society, Civilization," *Golden Horde Review 5*, (2017):2, էջ 325-43 (https://doi.org/10.22378/2313-6197.2017-5-2.325-343 (դիտուել է 20.09.2020):

[3] http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1892/1892(68).pdf (մատչում՝ 20.11.2020):

[4] Նար-Դոս, *Երկերի ժողովածու, հատոր 4*, «Նայիրի» հրատ., Երեւան, 1990, էջ 89:

[5] Յ. Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու, հատոր 9րդ*, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., Երեւան,1997, էջ 108:

Մեծ Եղեռնի զոհ հրապարակախօս Եդուարդ Ակնունին 1911ին Պոստոնում տպագրում է «Բողոքի ձայն» անգլերէն յօդուածաշարը, որը մանրամասներ է հաղորդում դարասկզբի Ռուսական Կայսրութիւնում առողջապահական վիճակի մասին: «*1910ին Ռոստովը ամբողջ վարակուած էր քոլերայով, եւ նահանգի այս ու այն կողմերում «հպատակները» մեռնում էին ճանճերի նման: Համաճարակի լուրը հասաւ կալանաւորներին, եւ բանտի մէջ տիրեց սեւ սոսկում...*»[6]: Իդէպ, ինդկախտի (խոլերա) համավարակի առթիւ ռուս գրող Վիկտոր Շկլովսկին վկայում է. «*Վախենում եմ, որ Պետերբուրգում բոլորը յանկարծ կը մահանան*»[7]:

Ինչպէս երեւում է տարբեր ժամանակներում եղել են համավարակներ, որոնց դէմ պայքարի ուղղութեամբ կատարուել են որոշակի սահմանափակումներ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ամերիկեան Merriam-Webster բառարանը 2020ի բառ է ընտրել pandemicը (համավարակ): «*Երբեմն մէկ բառը դարաշրջան է բնորոշում, եւ տրամաբանական է, որ այս բացառիկ եւ ծայրաստիճան դժուար տարում մի բառ անմիջապէս յայտնուեց առաջին դիրքում, երբ մենք վերլուծեցինք այն տուեալները, որոնք որոշում են, թէ որն է մեր տարուայ խօսքը: Հիմք ընդունելով շատ բառերի վիճակագրական վերլուծութիւնը... Merriam-Websterի համար 2020ի համար բառը pandemicն է*»[8], ասւում է բառարանի կայքում: Իդէպ, այս բառի որոնման առաջին կտրուկ աճը տեղի է ունեցել Փետրուարի 3ին, բայց առաւել յաճախ սկսել էին փնտռել Յունուարի 20ից, երբ ԱՄՆում արձանագրուել էր COVID-19ի առաջին դէպքը:

Համավարակի տարածումն ու հետեւանքները անխուսափելիօրէն առնչւում են արտագաղթին, փոխադրութեան, զբօսաշրջութեան: Հարցը վերաբերում է հասարակութեան մէջ պատասխանատուութեան բաշխման եւ քաղաքացիների ընկալման, պետական համակարգի աշխատանքի կազմակերպման, առողջապահական համակարգից մինչեւ իրաւապահ մարմիններ գործունէութեան որակին: Այլ կերպ ասած՝ աշխարհն այլ էր մինչեւ 2020ը եւ դրանից յետոյ:

---

[6] Է. Ակնունի, *Բողոքի ձայն. կովկասահայ քաղաքական բանտարկեալները (ցարական հալածանքի մի էջ)*, 1911, Հայրենիք հրատ., Պոսթըն (https://digilib.aua.am/book/2012/2466/19002/%D4%B2%D5%B8%D5%B2%D5%B8%D6%84%D5%AB%20%D5%B1%D5%A1%D5%B5%D5%B6 (մատչում՝ 20.09.2020):

[7] https://history.wikireading.ru/339878 (մատչում՝ 20.11.2020):

[8] https://www.merriam-webster.com/words-at-play/word-of-the-year/pandemic (մատչում՝ 20.12.2020):

Այսրկովկասի կառավարութիւնները համավարակին բախուելիս կիրառել են նմանատիպ սահմանափակումներ, սակայն արդիւնքները տարբեր էին: Աւելին, նորայայտ այս համավարակը դարձել է միջազգային սպառնալիք, որը կշէռքի նժարին է դրել տարբեր պետութիւնների կարողութիւնը՝ Միացեալ Թագաւորութիւնից մինչեւ Չինաստան:

Համավարակի հետեւանքներն ու կապերը քաղաքական համակարգերի կայունութեան վրայ՝ մնում է դեռեւս չուսումնասիրուած: Մինչդեռ կարելի է վստահ խօսել առկայ միտումների մասին[9]:

Այս առումով Այսրկովկասը յարմար ուսումնադաշտ կարող է դառնալ: Նախ, այն նման է այլ տարածաշրջաններին եւ առկայ է ժահրի տարածման համեմատաբար բարձր վտանգայնութիւն: Այն իր տարածքով եւ բնակչութեան խտութեամբ սահմանակից է վարակի օջախներից մէկին՝ Իրանին: Երկրորդ, Այսրկովկասի երեք պետութիւններն էլ յետխորհրդային աղքատ տարանցիկ երկրներ են, որոնք շատ առումներով նոյնն են եւ որն ազդում է ընդհանուր համավարակի վրայ: Դրա մէջ կարելի է ներառել բնակչութեան կեանքի միջին տեւողութիւնը, տարիքային կառուցուածքը, առողջապահութեան որակը, առողջահամաճարակային իրավիճակը, երկրների արդիականացման մակարդակը եւ կրթութեան որակը: Միաժամանակ, բոլոր նմանութիւններով հանդերձ, դրանք զգալիօրէն տարբերւում են մի շարք քաղաքական եւ տնտեսական ձեւաչափերով. ըստ իշխանութիւնների օրինականութեան աստիճանի եւ քաղաքական վարչակարգերի կառուցուածքի, պետական կառավարման համակարգի, տնտեսութիւնների տեսակի, միջազգային յարաբերութիւններում կարգավիճակի եւ տարածաշրջանում ունեցած ռազմական կշռի: Ընդ որում, ՀՀՀն եւ Վրաստանը խորհրդարանական հանրապետութիւններ են, իսկ Ադրբեջանը պաշտօնապէս՝ նախագահական (թէեւ վերջին տասնամեակների ընթացքում երկրում իշխում է մէկ ընտանիք):

Ընդհանուր առմամբ, համավարակի դէմ պայքարի գաղափարախօսութիւնը հիմնուած է առողջամեկուսացման եւ տագնապի վրայ: Հակառակ Այսրկովկասում տարածուած համոզմունքներին՝ խուճապը ոչ միայն չի խանգարել ժահրի դէմ պայքարին, այլ հակառակը, դիտուել է որպէս անհրաժեշտ պայման: Խուճապը հիմք դարձաւ իշխանութեան շուրջ հասարակութեան համախմբման համար՝ սահմանուած խիստ կանոններով եւ արգելքներով: Դրա իրականացման գործիքը կարող է լինել միայն քաղաքացիների կամաւոր համաձայնութիւնը, որը հազուադէպ է տարածաշրջանի երկրներում: Այսրկովկասի ոչ մի վարչակարգ չունի զանգուածային

[9] И. Крастев, “Семь первых уроков глобального коронавирусного кризиса”, Россия в глобальной политике (Համաշխարհային համավարակի ճգնաժամի եօթ առաջին դասեր. Ռուսաստանը համաշխարհային քաղաքականութեան մէջ) https://globalaffairs.ru/articles/sem-urokov-koronakrizisa/ (մատչում՝ 22.09.2020):

հարկադրանքի այնպիսի մեքենայ, որը կը պահանջի առողջամեկուսացնել հասարակութեան՝ իշխանութեանը հակադրուելու պայմաններում: Յատկանշական է, որ վախը պատճառ է դարձել, որ միլիոնաւոր մարդիկ արմատապէս փոխեն իրենց ապրելակերպը[10]: Այդպիսի փոխհամաձայնութեան բացակայութեան դէպքում այս համեմատաբար աղքատ պետութիւններից եւ ոչ մէկը աղբիւրներ չէր ունենայ համավարակի դէմ պայքարելու: Դրանով հանդերձ, հենց պետութիւնների աղքատութեան պատճառով է, որ այդ փոխհամաձայնութիւնը փխրուն է եւ կարող է թուլանալ որպէս հետեւանք ազգային տնտեսութիւնների աշխատանքի սառեցման, որն էլ կը բերի տնտեսական եւ ընկերային խնդիրների աճին:

Այսրկովկասի երկրները սահմանափակ աղբիւրների պատճառով կանգնած էին ընտրութեան հարցի առջեւ. շարունակել համավարակի սահմանափակումները տնտեսական գործունէութեան անկման պայմաններում կամ հնարաւորութիւն տալ տնտեսութեանը գոյատեւելու մի շարք ոլորտներում եւ խուսափել լիակատար փլուզումից մարդկային մեծ զոհերի հաշուին: Միւս կողմից ձգձգուող տնտեսական ճգնաժամն աւելի մեծ վտանգ է ներկայացնում քաղաքացիների համար, քան վարակուածների թուի յետագայ աճը:

ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Այսրկովկասում պետական մակարդակով արձագանգելու անհրաժեշտութեան գիտակցումն աւելի շուտ յայտնուեց քան շատ այլ տարածաշրջաններում: Փետրուար 2020ին Իրանում կտրուկ աճել է վարակների թիւը՝ ուղեկցուելով առաջին մահուան դէպքերով: Նշուած ամսի վերջին Այսրկովկասի երեք երկրները փակեցին իրենց սահմաններն Իրանի հետ, եւ միեւնոյն ժամանակ, երեք երկրներում էլ յայտնուեցին Իրանից ժամանած վարակուածներ: Դրանից յետոյ հիւանդների հոսքը գալիս էր հիմնականում Իտալիայից: Դրան արձագանգեց ամենաարագը Վրաստանը, որը Մարտի 6ին փակեց Իտալիայի հետ ուղիղ հաղորդակցութիւնը:

Մարտի երկրորդ կէսից դէպքերի թիւը սկսեց աճել, եւ դրանք կապուած էին այս երկրներում երկրորդային փոխանցման հետ: Այնուհետեւ երկրները սկսեցին ձեռնարկել զսպման միջոցառումներ: Այդ հարցում առաջատարն էր Վրաստանը, որտեղ Մարտի սկզբից փակ էին ուսումնական հաստատութիւնները եւ ոչ-պարէնային առեւտուրը: Որոշ ժամանակ անց, Ադրբեջանը եւս սկսեց կիրառել նման միջոցառումներ: Միայն ՀՀն չի կիրառել որեւէ սահմանափակում երկրի ներսում մինչ արտակարգ դրութեան յայտարարումը Մարտի 16ին: Եւ չնայած ՀՀում արտակարգ դրութիւնը իվերջոյ ներդրուեց աւելի շուտ, քան հարեւանների շրջանում (Վրաստանում՝ Մարտի 21ին, Ադրբեջանում՝ 24ին), Մարտին երկու շա-

[10] Նոյն:

բաթ սահմանափակումների բացակայութեան՝ համավարակը կարողացաւ արագօրէն տարածուել ՀՀում: Այդպիսով համավարակի մեկնարկի փուլում Երեւանը զգալիօրէն ետ մնաց Բաքուից եւ Թբիլիսիից մինչեւ արտակարգ դրութիւն կը հաստատուէր Հայաստանում Մարտի 16ին, իսկ դրան նախորդած մէկ շաբաթը կարող էր դառնալ ժահրի արագ տարածման պատճառը:

Չնայած Վրաստանն ունի աւելի մեծաթիւ զբօսաշրջութիւն եւ աւելի սերտ կապեր ԵՄի հետ, հենց այդ երկրում է գրանցուել Իրանից բերուած վարակի տարածման առաջին դէպքն Այսրկովկասում, այնուամէնայնիւ Վրաստանը զգալիօրէն աւելի քիչ վարակներ ունեցաւ, քան իր հարեւանները: Երբ սկսուեց վարակուածների հոսքը Իտալիայից, Վրաստանը գտնուում էր ամենաբարձր վտանգայնութեան տակ. Այսրկովկասի երկրների 10 ներգաղթեալներից 9ը, որոնք գտնուում էին Իտալիայում, Վրաստանի քաղաքացիներ էին[11]:

Հարկ է նշել, որ Իրանում Հոկտեմբերի 24ին հաստատուել էր ժահրային հիւանդութեան աւելի քան հինգ հազար նոր դէպք, մահացել էր 335 մարդ, համավարակով վարակուածների ընդհանուր թիւը հասել էր 562,705ի, մահացել էր 32,320 մարդ[12]:

Չնայած Մարտի երկրորդ կէսին ՀՀն դարձաւ Այսրկովկասում ժահրի տարածման առաջատարը, Ապրիլի սկզբին ՀՀում աճի թափը դանդաղեց առողջամեկուսացման միջոցառումների շնորհիւ: Ապրիլի 7-13ի ընթացքում ամէնօրեայ աճը կազմեց 3,6%: Դրանից բխում է, որ դէպքերի քանակի կրկնապատկումը տեւել է գրեթէ 20 օր: Ադրբեջանում եւ Վրաստանում տարածումն աւելի կայուն էր, իսկ կրկնապատկումը տեւեց մէկից մինչեւ երկու շաբաթ:

Համավարակի դէմ պայքարի ընթացքում առաջացան որոշ խնդիրներ հայ եւ վրացի քաղաքական գործիչների միջեւ: Թբիլիսիում «ոչ-դիւանագիտական» որակեցին ՀՀ առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեանի Մայիսի 22ի յայտարարութիւնը՝ համավարակի դէմ պայքարում Վրաստանի քայլերի մասին: Չժխտելով, որ Վրաստանում սահմանափակումներն աւելի լաւ են իրականացուում, Թորոսեանը միաժամանակ ասել էր, թէ Վրաստանի հակահամաճարակային համակարգը էականօրէն զիջում է ՀՀին եւ թափանցիկութեան նման մակարդակ որեւէ երկրում չկայ եւ որ Վրաստանով ՀՀ ժամանած, այդ թւում եւ մեծ թուով վրացի վա-

---

[11] Իտալիայի վիճակագրութեան ազգային հիմնարկ, http://dati.istat.it/?lang=en&SubSessionId=1be341d2-f285-4bf6-8b35-1f9c1a348a04 մատչում՝ 14.09.2020:

[12] «Իրանում հաստատուել է COVID-19ի աւելի քան հինգ հազար նոր դէպք, մահացել է 335 մարդ», https://parstoday.com/hy/news/iran-i127321?fbclid=IwAR1VVLEY9KJtXUYReM_rO06hhRWPsIXizy3USUHUm7briADLOQc1jaZE6aw , (մատչում՝ 14.11.2020):

որդներ վարակուած են լինում համավարակով: Վրաստանի հիւանդութիւնների վերահսկման եւ հանրային առողջութեան ազգային կենտրոնի տնօրէն Ամիրան Գամկրելիձէն հակադարձել էր, թէ ըստ ստորագրուած միջազգային պայմանագրերի՝ կողմերը պէտք է միմեանց տեղեակ պահեն, եթէ իրենց քաղաքացին վարակակիր է եւ այժմ այդ տարածքում է.- «*Մենք շատ մտերիմ ժողովուրդներ ենք, հարեւաններ, ունենք երկար պատմութիւն, եւ ես մի փոքր ճնշուած էի այս տեսակի «ոչ-դիւանագիտական» յայտարարութիւնից*»[13]:

Աղիւսակ 1[14].- **Այսրկովկասում համավարակի պատկերը 2020 Մարտի սկզբին**			
	ՀՀ	Վրաստան	Ադրբեջան
Իրանի քաղաքացիների այցելութիւններ	150,000	141,997	241,124
Իրանի հետ սահմանի փակման ամսաթիւը	24 Փետր.	23 Փետր.	29 Փետր.
Իտալիայի քաղաքացիների այցելութիւններ	13,000	21,424	11,035
Չինաստանի քաղաքացիների այցելութիւններ	15,500	48,071	15,730
Այսրկովկասի երկրների քաղաքացիների թիւը Իտալիայում	1,241	15,778	486

Աղիւսակ 2[15].- **Այսրկովկասում համավարակի տարածման ուղղակի եւ անուղղակի ցուցիչները մինչեւ Յունիսի 7ի տուեալներով**						
Երկիր	Դէպքերի քանակը ամսաթուով Մայիսի 6ից Յունիս 6		Աճի արագութիւնը (ամէն օր)	Աճի արագութիւնը	Մայիսի 6ից Յունիսի 6 կրկնապատկելուց առաջ	Համավարակի առողջաքննութեան քանակը 1 դրականի համար
ՀՀ	13,130	2,884	5.2%	5.9%	12.1	5.3
Վրաստան	809	615	0.9%	-3.3%	-20.8	76

[13] Կարլէն Ասլանեան, «Թբիլիսիում «ոչ դիւանագիտական» են որակում Արսէն Թորոսեանի յայտարարութիւնները», 23.05.2020, https://www.azatutyun.am/a/30630570.html (մատչում 11.12.2020):

[14] *ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակ, 2019 թ. Յունուար-Դեկտեմբեր*, Երեւան, 2019, էջ 247 (https://www.armstat.am/ru/?nid=82&id=2236). նաեւ՝ "International Travel (Residence) 2019" (Georgian National Tourism Administration, https://gnta.ge/statistics/). նաեւ՝ "Tourism Section," (The State Statistical Committee of the Republic of Azerbaijan, https://www.stat.gov.az/source/tourism/?lang=en), (մատչում՝ 14.11.2020):

[15] "Covid-19 Coronavirus Pandemic," https://www.worldometers.info/, https://www.worldometers.info/coronavirus/ (մատչում՝ 11.09.2020):

Ադրբեջան	7,553	2,204	4.2%	5.7%	12.5	-

Ակնյայտ է, որ հանրային կառավարման որոշ տարրերի թերացման դէպքում առաջանում են ոչ միայն ներքին, այլեւ միջպետական խնդիրներ:

ՀՀն ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Այսրկովկասի երեք երկրների թւում համավարակի ամենաբարձր մակարդակը գրանցուեց ՀՀում՝ 2020 Մարտ-Մայիս ամիսների ընթացքում մէկ միլիոն բնակչի հաշուով, գրեթէ հինգ անգամ աւելի բարձր, քան տարածաշրջանի ամենայաջողակ երկրում՝ Վրաստանում: Այնուամէնայնիւ, գարնան ամսիներին ՀՀ բժշկական ծառայութիւնները ծանրաբեռնուած չէին եւ ի վիճակի էին անյապաղ օգնութիւն ցուցաբերել հիւանդներին՝ չնայած սահմանափակ աղբիւրներին եւ փոքր քանակութեամբ օդափոխիչներին (թոքերի արհեստական օդափոխութիւն):

Համեմատաբար իրավիճակի մեղմացմանը կարող էր նպաստել երկրի՝ տասնամեակներ շարունակ առանց այդ էլ մեկուսացուած լինելը. փակ են ՀՀ ցամաքային սահմանները իր չորս հարեւաններից երկուսի՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ: Իդէպ, վերջինիս հետ ունի ամենաերկար փակ սահմանը: Իրանի հետ 46 կմ.անոց ամենակարճ սահմանը փակուեց Փետրուարի 24ին, միաժամանակ սահմանափակուեց օդային հաղորդակցութիւնը, իսկ Մարտի 2ին ՀՀ ղեկավարութիւնը ժամանակաւորապէս վիզայի կարգ հաստատեց Իրանի հետ: Զբօսաշրջային եղանակը, երբ սովորաբար ՀՀ են այցելում մեծաթիւ զբօսաշրջիկներ Եւրոպայից եւ ՌԴից, համավարակի մեկնարկի պահին դեռ չէր սկսուել: Մարտի 16ից ՀՀում յայտարարուեց արտակարգ դրութիւն[16], չեղեալ յայտարարուեցին գրեթէ բոլոր թռիչքները, իսկ Մարտի 27ից խիստ սահմանափակումներ դրուեցին քաղաքացիների հաւաքների եւ տեղաշարժման հարցում, փակուեցին բազմաթիւ հիմնարկներ, բացի ռազմավարական նշանակութեան ձեռնարկութիւններից, սահմանափակուեց երթեւեկութեան միջոցների տեղաշարժը[17]: Ըստ էութեան, ՀՀում հաստատուեց մարդկանց պարտադիր ինքնամեկուսացման կարգ իրենց տներում, եւ ընդհանուր առմամբ, դա նկատուել է առնուազն քաղաքներում: Բեռները տեղափոխւում էին, բայց մարդկանց տեղաշարժն արգելւում էր, բացառւում էին միայն հայրենիք վերադարձող ՀՀ քաղաքացիները, նրանց ընտանիքի անդամները եւ երկրում կեցութեան իրաւունք ունեցող անձինք:

---

16 https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/03/16/Cabinet-meeting/ (մատչում 24.09.2020):

17 https://www.gov.am/files/docs/3976.pdf?fbclid=IwAR0_qIUCostPZ2YxwRuI-Zs5ooaYMbH3XCWT54JjCE8Lx5ixaHgH8fyBjoE (մատչում 24.09.2020):

Հարեւանների համեմատ հիւանդութեան աւելի մեծ տարածման պատճառ կարող է լինել այն, որ ՀՀում առողջամեկուսացման միջոցներն անմիջապէս չեն ձեռնարկուել: Մարտի 1ին հաստատուեց վարակի առաջին դէպքը, որն Իրանից վերադարձած ՀՀ քաղաքացի էր: Այնուհետեւ յայտնուեցին վարակուածներ, որոնք ժամանեցին Իտալիայից, սակայն մինչեւ Մարտի կէսը լուրջ միջոցներ չէին ձեռնարկուել համավարակը կանխելու համար: Իշխանութիւնները հանդէս էին գալիս մխիթարական յայտարարութիւններով, որ խուճապի պատճառ չկայ, եւ իրավիճակը վերահսկւում է[18]: Արտակարգ դրութեան հաստատումից դեռեւս միքանի օր առաջ պաշտօնատարներն ասում էին, որ կարիք չկայ դադարեցնել թռիչքները եւրոպական երկրներից, այդ թւում՝ Իտալիայից[19]:

ՀՀում համավարակը դուրս եկաւ Երեւանի սահմաններից, երբ Մարտի 12ին տեղեկութիւններ յայտնուեցին, որ վարակուել է Էջմիածին քաղաքի բնակիչներց մէկը: Մեկուսացուեց 40 մարդ: Ընդհանուր առմամբ, այդ պահին երկրում մեկուսացուած էր 57 քաղաքացի:

ՀՀում շատերն էին վրդովուած այն փաստով, որ Իտալիայից վերադարձած Էջմիածնի բնակիչը ազատ շրջել էր քաղաքում եւ տարբեր միջոցառումների մասնակցել: Առողջապահութեան նախարարին քննադատում

---

[18] Արսէն Թորոսեան, «Հնարաւոր չէ փակել ամբողջ աշխարհի ուղեւորաշրջանառութիւնը», 23.02.2020, https://www.azatutyun.am/a/30449651.html . նաեւ՝ «Նոր կորոնավիրուսի դէպքը առողջապահական մեծ վտանգ չի ներկայացնում. Նախարար», 01.03.2020, https://www.civilnet.am/news/2020/03/01/%D5%86%D5%B8%D6%80-%D5%AF%D5%B8%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB-%D5%A3%D6%80%D5%A1%D5%B6%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84%D5%A8-%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%AE-%D5%BE%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A3-%D5%B9%D5%AB-%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%E2%80%A4-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80/377417 (դիտուել են 14.09.2020):

[19] Արթուր Յովհաննիսեան, «Բացառուած չէ, որ COVID-19ով վարակուածների թիւն աւելի մեծ է», http://www.irates.am/hy%C3%83%C6%92%C3%82%C6%92%C3%83%E2%80%A0%C3%82%E2%80%99%C3%83%C6%92%C3%82%E2%80%9A%C3%83%E2%80%9A%C3%82%C2%AF/1584052988 (մատչում՝ 16.09.2020):

էին, որ վարակի օջախ հանդիսացող երկրներից ժամանածները չեն մեկուսացում[20]:

Նշելի է, որ Ապրիլի 6ին համավարակի առնչութեամբ Գարեգին Բ. կաթողիկոսի իրավիճակով պայմանաւորուած հայրապետական յորդորով որոշում ընդունուեց պատարագներն անցկացնել դռնփակ, առանց հաւատացեալների ներկայութեան[21]:

ՀՀում առողջամեկուսացման միջոցառումների յետաձգման պատճառները բխում են քաղաքական հանգամանքներից: Այլ կերպ ասած՝ որոշումների իրականացման գործընթացում պէտք է նկատի ունենալ գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններին: Ապրիլի 1-12ը երկարաձգուեցին արտակարգ դրութեան պայմաններում տեղաշարժի եւ տնտեսական գործունէութեան որոշ տեսակների նկատմամբ սահմանափակումները[22]: Ապրիլի 13ին կառավարութեան որոշմամբ՝ արտակարգ դրութեան կարգը երկարաձգուեց մինչեւ Մայիսի 14ը[23]: Սակայն հանուեց լրատուամիջոցների աշխատանքը սահմանափակելու մասին դրոյթը[24]:

2020 Ապրիլի 5ին ՀՀում սահմանուեց սահմանադրութեան փոփոխութեան վերաբերեալ հանրաքուէն[25]: Մեծ նշանակութիւն տալով միջոցառմանը՝ իշխանութիւնները յետաձգեցին առողջամեկուսացման միջոցների կիրառումը մինչ հանրաքուէի անցկացումը եւ նոյնիսկ շարունակեցին քարոզարշաւը: Արդէն Մարտի 11ին, այսինքն՝ արտակարգ դրութեան յայտա-

---

20 https://jamnews.net/am/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%AF%D5%B8%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%BD%D5%A8-%D5%A4%D5%B8%D6%82%D6%80%D5%BD-%D5%A7-%D5%A3%D5%A1/ (մատչում՝ 24.11.2020):

21 https://www.armenianchurch.org/index.jsp?sid=3&nid=4338&y=2020&m=3&d=6 (մատչում՝ 24.11.2020):

22 https://www.gov.am/files/docs/4006.pdf?fbclid=IwAR16iBFEfAP0OSPHAsQ6Pfug8zngzxCfcPpWdvm7p1AQYHIO3pn15T7gUEc (մատչում՝ 16.09.2020):

23 https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/04/13/Cabinet-meeting/ (մատչում՝ 16.09.2020):

24 Ըստ ԽԱՊԿի զեկոյցի՝ դրոյթի կիրառումը այդ օրերին լրագրողների եւ ՋԼՄների նկատմամբ ճնշման 30 դէպքի պատճառ հանդիսացաւ («Հայաստանում խօսքի ազատութեան վիճակի եւ լրագրողների ու ՋԼՄների իրաւունքների խախտումների մասին 2020 թ. առաջին եռամսեակային զեկոյց», https://khosq.am/reports/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%b4-%d5%ad%d5%b8%d5%bd%d6%84%d5%ab-%d5%a1%d5%a6%d5%a1%d5%bf%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%be%d5%ab%d5%b3%d5%a1%d5%af%d5%ab-21/ (մատչում՝ 16.09.2020):

25 Հանրաքուէի արդիւնքում պէտք է տեղի ունենար սահմանադրական դատարանի նոր կազմի նշանակումը:

ռարումից հինգ օր առաջ, վարչապետ Նիկոլ Փաշինեանը շրջեց երկրով մէկ՝ յորդորելով քաղաքացիներին քուէարկել հանրաքուէի օգտին Ապրիլի սկզբին[26]: Իշխանութիւնները կարող էին իրենց թոյլ տալ նման քաղաքականութիւն այն դէպքում, եթէ վստահ լինէին, որ համավարակը շրջանցելու է ՀՀն...: Վարչապետն աւելի ուշ իր կոչերից մէկում ընդունեց իր կառավարութեան սխալը[27]: Աւելին, 2020 Յունիսի 3ին ՀՀ ազգային ժողովը հաստատեց «Հանրաքուի մասին» օրէնքում կատարուած փոփոխութիւնները[28], որոնք հնարաւորութիւն տուեցին չեղարկել սահմանադրութեան փոփոխութիւնների քուէարկութիւնը եւ խորհրդարանին փոխանցել «Հիմնական օրէնք»ում փոփոխութիւններ կատարելու իրաւունքը:

Առողջամեկուսացման անարդիւնաւէտ կազմակերպման հետևանքով Մայիսին իրավիճակը սրուեց[29]:

Մայիսի 14ին կառավարութիւնը որոշեց երկարաձգել արտակարգ դրութիւնը մինչեւ Յունիսի 13ը՝ է՛լ աւելի մեղմացնելով սահմանափակումների կարգը[30]: Սակայն ըստ պարէտ Տիգրան Աւինեանի, սահմանափակումները կը խստացուէին, եթէ հիւանդներն այնքան շատ լինէին, որ հիւանդանոցները նրանց տեղաւորելու խնդիր ունենային: Մայիսի 18ից իր աշխատանքը վերսկսեց քաղաքային երթեւեկութիւնը, որից օգտուելու դէպքում դիմակ կրելը պարտադիր էր[31]: Վերաբացուեցին նաեւ առեւտրի իրականացման վայրերը, մարզասրահները, բացօթեայ պատմամշակութային վայրերը եւ նախակրթարանները: Դիմակ ունենալը պարտադիր էր, սա-

---

[26] Մարտի 11ին Նիկոլ Փաշինեանը եւ «Այո» ճակատի մի խումբ ներկայացուցիչներ այցելեցին Սիւնիքի մարզի քաղաքներ եւ գիւղեր, որտեղ հանդիպեցին բնակիչների հետ՝ քարոզարշաւ անցկացնելով հանրաքուի օգտին (https://rus.azatutyun.am/a/30481815.html , մատչում՝ 20.09.2020):

[27] «Մէկ–մէկ մտածում եմ, որ սխալ արեցինք, որ Իտալիայի չուերթերն աւելի շուտ չփակեցինք. Նիկոլ Փաշինեան», 06.04.2020, https://news.am/arm/news/570890.html . նաեւ՝ «Չենք կարող լինել անսխալական, սխալներ ամէն օր թոյլ ենք տալիս, բայց շատ կարեւոր է, որ այդ սխալներից կարողանանք սովորել, որովհետեւ սխալները մեր ամենամեծ ուսուցիչն են»: Այս մասին 2020 Ապրիլի 6ին քաղաքացիների հարցերին պատասխանելիս յայտարարեց ՀՀ վարչապետը:

[28] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=7199&lang=arm (մատչում՝ 20.11.2020).

[29] Упущения Армении в борьбе с COVID-19. Политические и институциональные причины // Кавказский узел. 30 мая 2020 (Հայաստանի ձախողումները COVID-19ի դէմ պայքարում: Քաղաքական եւ հաստատութենական պատճառներ, Կովկասեան հանգոյց), https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/43476 (մատչում՝ 20.09.2020):

[30] https://www.e-gov.am/gov-decrees/item/33994/ (մատչում՝ 20.09.2020):

[31] https://www.youtube.com/watch?v=NYq3CrdjyiY (մատչում՝ 20.09.2020):

կայն բաց տարածքներում կարելի էր չկրել: Փակ տարածքներում դիմակ չկրելու դէպքում սահմանուած էր 10 հազար դրամ տուգանք[32]:

Հաշուի առնելով, որ ՀՀում համավարակը ուղեկցուեց սուր դրսեւորումներով՝ ներկայացնենք պաշտօնական մարմինների որոշումներն այդ ուղղութեամբ: Այսպէս, Յունիսի 4ից ուժի մէջ մտան արտակարգ դրութեան ընթացքում կիրառուող կարգաւորումներում արուած որոշ փոփոխութիւններ, մասնաւորապէս՝ դիմակի պարտադիր կրումը բոլոր հանրային բաց տարածքներում[33]:

Յունիսի 12ին[34] երրորդ, Յուլիսի 13ին[35] չորրորդ, Օգոստոսի 12ին[36] հինգերորդ անգամ ՀՀ կառավարութիւնը որոշեց արտակարգ դրութիւնը երկարաձգել՝ մէկական ամսով: Սեպտեմբերի 11ից առողջապահութեան նախարարութեան առաջարկով՝ արտակարգ դրութեան փոխարէն սահմանուեց առողջա-մեկուսացում՝ մինչեւ 2021ի Յունուարի 11ը[37]: Սեպտեմբերի 12ից ՀՀն բացեց օդային սահմանները[38], իսկ Սեպտեմբերի 14ից հանրապետութեան դպրոցներում մեկնարկեցին դասերը[39]:

Համեմատաբար, մեղմ վիճակ ստեղծուեց Օգոստոս ամսին: Համավարակի երկրորդ ալիքը եղաւ աշնանը, որը յառաջացաւ Սեպտեմբերի 27ին Ադրբեջանի, Թուրքիայի եւ ահաբեկչական խմբաւորումների կողմից ՀՀին եւ Արցախի Հանրապետութեանը պարտադրուած պատերազմով, մարդկային շփումների մեծացմամբ:

Այդ ամէնի հետեւանքով Նոյեմբերի 9ի դրութեամբ հիւանդանոցային հերթի էր սպասում 861 քաղաքացի: Առողջապահութեան նախարար Թորոսեանի խօսքով՝ ծանր եւ ծայրայեղ ծանր վիճակում գտնւում էր մօտ 1100 քաղաքացի, արհեստական շնչառական սարքերին միացուած էր 73 քաղաքացի, շնչառական սարքերի պակաս չկար. «*Իրականում մեր խնդիրը ոչ թէ սարքի, այլ բուն թթուածնի դեֆիցիտն է: Մեր երկրի թթուածնա-*

---

[32]https://www.armtimes.com/hy/article/188288?__cf_chl_jschl_tk__=035e4e453fe5f50a0dd2c87d52616d4fa3261e30-1598341887-0-Ad2XEaoVEI2glhQ-uyFN1IiTkLuBBE306j70Bfwf4oMqbCM7SreZ8yL7IOXqi71uFstVsaX4gt7wNeIV1fdKU8dZNikL8BtMdHvlRIbA2946k0dvKax-C8MBDMaroeqj6CTq3p6v7vVUIPmEMXu2LIAcYzgB2pzrcPIs8txvEgKRWaW3ZIUdLrCnUAKjGYJCqN-BTxI_IUBBPxW_JIKI2QGezqpz8iufb69J6vgFdxOL00cSw8aUXTntzdtGE9WAYxqXjMmAsletzcNsPWZFA0RLIH4I7c4HzG9NJV5eSDb0 :

[33]https://www.gov.am/files/docs/4086.pdf?fbclid=IwAR1krfdG6FIxikG2NyIZNfnSjyrjG8yqISFsuj8TmORiQyMhIpekz-FMnmY (մատչում՝ 22.09.2020):

[34] https://www.e-gov.am/gov-decrees/item/34188/ :

[35] https://www.e-gov.am/gov-decrees/item/34414/ :

[36] https://www.e-gov.am/gov-decrees/item/34569/:

[37] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/09/1514_1.pdf :

[38] https://www.facebook.com/azatutyun/videos/364756291349540/ :

[39] https://escs.am/am/news/6953 :

յին հզօրութիւնները աշխատում են սահմանի վրայ»: Ըստ նրա՝ աճը սպասելի էր, բայց ոչ այս թափով. «*Մենք հիմա, օրինակ, եւս 4 թթուածնի մեծ կայան ենք գնել, որը հիմա ճանապարհին է, ինչպէս նաեւ մօտ 500 հատ թթուածնային խտացուցիչներ ենք գնել... որպէսզի պահանջարկն ապահովենք*»[40]:

Յիրաւի, իրավիճակը բարդ էր, սակայն հաշուի առնելով Օգոստոս ամսին Ադրբեջանի եւ Թուրքիայի համատեղ զօրավարժութիւնները, զօրքերի կուտակումները ՀՀ սահմաններին, կարելի էր կանխատեսել դէպքերի նման զարգացում եւ նախապէս ձեռնարկել կանխարգելիչ քայլեր:

Համավարակի եւ այդ ընթացքում սրուած արցախեան հակամարտութեան վերաբերեալ ուշագրաւ են փորձագիտական կարծիքները: Այսպէս, 2020 Դեկտեմբերի 3ին Նիւ Եորքի Կոլումբիա Համալսարանի հայագիտութեան ամբիոնը կազմակերպել է «Հակամարտութիւն, տեղահանում եւ Կովիդ 19» խորագրով տեսաժողովը: Համալսարանի անյետաձգելի բուժօգնութեան գծով պրոֆեսորի օգնական Տսիոն Ֆիրէուին նկատում է, որ համավարակի տարում աշխուժացել են հակամարտութիւնները: Նա առանձնացնում է Եթովպիայի Թիկրէյի (Tigre) շրջանի հակամարտութիւնը: ՄԱԿ փախստականների հարցերով գործակալութեան տուեալներով՝ հազարաւոր մարդիկ ստիպուած են եղել փախչել Եթովպիայի այդ շրջանից Սուդան՝ իրենց կեանքը փրկելու համար: Տիգրէյի ճգնաժամն ուղեկցուել է բռնութիւնների սրմամբ եւ զանգուածային տեղահանման սպառնալիքով: Նկատենք, որ այս երեւոյթները առկայ են Արցախի դէպքում եւս: Ծագումով եթովպացի Ֆիրէուի գնահատմամբ՝ «*Երկու տեղ, որոնք ես անուանում եմ տուն՝ Ամերիկա եւ Եթովպիա, դուք այսօր ինձ թողել եք արցունքների եւ յուսահատութեան մէջ*»[41]:

Վերոնշեալ համաժողովի ընթացքում համալսարանի սննդի ինստիտուտի օգնական, կենսաբանական գիտութիւնների թեկնածու Քիմ Հեքիմեանը զեկուցել է ՀՀում համավարակի զարգացումների մասին՝ պատերազմի օրերին[42]: Նա առանձնացրել է համավարակի տարածման հարցում հետեւեալ փուլերը՝ բացայայտում, կարգաւորման փուլ, պատերազմի մեկնարկ, Հայաստանի COVIDի նախա- եւ յետ-պատերազմեան փորձ, դէպքերի աճի հետեւանքներն ու պատճառները, ընթացիկ իրավիճակը:

Արցախի ռազմաճակատ մեկնած կամաւորների խմբի լուսանկարը կարծես պատմում է հայութեան միասնականութեան, Սփիւռքի հետ եղբայրաբար խնդիրները լուծելու վճռակամութեան, ոգեւորուածութեան մա-

---

[40] «Ծանր եւ ծայրայեղ ծանր վիճակում գտնւում է մօտ 1100 քաղաքացի. Արսէն Թորոսեան», https://a1plus.am/hy/article/384950, 09.11.2020, (մատչում՝ 20.11.2020):

[41] "Conflict, Displacement and COVID-19," Dec. 3, 2020, https://www.youtube.com/watch?v=GTI1_vB3Uew (դիտուել է 03.12.2020):

[42] Conflict, Displacement and COVID-19:

սին, որը մեծ արձագանգ է գտել ընկերային ցանցերում: Սակայն Հեքիմ-եանը նկատում է, որ եթէ նոյնիսկ մէկ մարդ փակ պատուհաններով փոխադրակառքում լինէր վարակուած, դրան աւելացրած երկար ճանապարհը, մարդկանց կողմից դիմակներ չկրելու փաստը, նաեւ օդափոխութեան անհնարինութիւնը՝ աղիտալի կը լինէր վարակի տարածման առումով մնացած մարդկանց առողջութեան համար:

Հեքիմեանը շեշտում է, որ կամաւոր ուսանողների կողմից Երեւանում կազմակերպուած փաթէթների հաւաքման եւ տեսակաւորման, զինուորական համազգեստներ կարած, ռազմաճակատի համար պաշտպանական նշանակութեան ցանցեր գործած կանանց աշխատավայրերում եւս բացակայել են օդափոխութեան համակարգերը, մարդիկ միմեանցից շատ մօտ են աշխատել, չի պահպանուել ֆիզիկական հեռաւորութիւնը: Իրավիճակը նոյնն է եղել նաեւ մոմի լոյսի շուրջ նկուղներում հաւաքուած կանանց, ապաստարաններում մօտ հեռաւորութեամբ մահճակալներում պառկած վիրաւոր զինուորականների դէպքերում: Համավարակի տարածման յաջորդ պատճառն է յուղարկաւորութիւնները, որտեղ մարդիկ դիմակներ չեն կրել:

Ի յաւելումն ասուածին, նշենք որ ՀՀում 2020 Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին համավարակի ցուցանիշները եղել են նուազման վիճակում ընդհուպ Սեպտեմբերի 20ը, երբ դէպքերի քանակը նուազել է 500ից բաւականին ցածր, իսկ մէկ շաբաթուայ ընթացքում այն կտրուկ փոխուել է: Հոկտեմբերի վերջին եւ Նոյեմբերի սկզբին իրավիճակը ծայրայեղ վատ էր եւ մօտ 50% աճ է եղել՝ օրական անցնելով 2000 վարակակիրի թիւը, որը համապատասխանում է պատերազմի ժամանակահատուածին: ՀՀն բարձր ցուցանիշ է գրանցել 1 միլիոն բնակչութեան թուով մարդկանց մահացութեան դէպքում, որը Նոյեմբերի 6ի դրութեամբ ամէնից բարձր տեղում էր. Նոյեմբերի 13ին գրանցուել է օրական մինչեւ 35 մահ:

Այսպիսով Արցախեան հակամարտութեան եւ COVID 19ի հետեւանքներն են.-

- ռազմական իրավիճակի պայմաններում վարակուած զինուորներ.
- հիւանդանոցային մահճակալների եւ առողջապահութեան աշխատակիցների պահանջարկ.
- թթուածնի պաշարների պահանջարկ.
- *հումանիտար* աղէտի առաջացում.
- վիրաւոր զինուորներ եւ քաղաքացիներ.
- տեղահանուած մարդիկ:

Նոյեմբերի 23ին համավարակն ընդգրկել է ՀՀ հիւանդանոցները: Ըստ ՀՀ առողջապահութեան նախարարութեան՝ վարակակիր մարդիկ հերթի էին հիւանդանոցային 321 մահճակալների տեղի համար: Մինչդեռ ամսի սկզբին վարակակիրների թիւը տատանւում էր 500-600ի միջեւ:

Այս համապատկերին աւելացել են տեղահանուած մարդիկ իրենց բազմաթիւ խնդիրներով: Որոշ մարդիկ ընդունում էին Արցախից եկած իրենց

հարազատներին եւ ողջագուրում, չէր պահպանում ֆիզիկական հեռաւորութիւնը:

Ազգային վիշտն ուղեկցուել է առողջութեան վտանգումով, մարդկային կեանքերի, հողի, մշակոյթի կոթողների, եկեղեցիների եւ անվտանգութեան կորուստով:

Դեկտեմբերի 1ի դրութեամբ ՀՀն աշխարհում համավարակի տարածման վտանգաւոր կենտրոն է համարուել: 2020ի Դեկտեմբերի 31ի դրութեամբ հաստատուած դէպքերի ընդհանուր քանակը կազմել է 159,409, առողջացածներինը՝ 142,801, փաստացի բուժուողները՝ 13,101, քննուածների թիւը՝ 593,903, մահերը՝ 2823, մահեր այլ պատճառով՝ 684: Այդ վիճակը մեղմելու նպատակով Դեկտեմբերի վերջին ՀՀն ձեռք բերեց թթուածին արտադրող 8 մեծ կայան[43], 400 անհատական թթուածնային խտացուցիչ, 100 հազար համավարակային հիւանդութեան ախտորոշման քննասրուակ, 200,000 նմուշառման ձողիկ, ինչպէս նաեւ դիմակներ եւ արտահագուստ[44]:

2020ի Դեկտեմբերին ԵՄը յայտնել է ՀՀ կառավարութեանը համավարակի դէմ պայքարին աջակցելու նպատակով ՀՀին յաւելեալ 24 միլիոն եւրո դրամաշնորհ յատկացնելու մասին[45]:

ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՒ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ադրբեջանում վարակի առաջին դէպքը գրանցուել է Փետրուարի 28ին Իրանից վերադարձած ՌԴ քաղաքացու մօտ, այնուհետեւ Փետրուարի 29ին Ադրբեջանի քաղաքացիների մօտ յայտնաբերուել են վարակի դէպքեր: Նոյն օրը երկիրը փակեց Իրանի հետ ցամաքային սահմանը: Մար-

---

[43] Թթուածին արտադրող 8 կայանից 2ը հնարաւոր է դարձել "UCLA's operation Armenia"ի ֆինանսաւորմամբ եւ ՀԲԸՄի օժանդակութեամբ: Մնացեալից 3 կայան ՀՀ է բերուել 2020 Յունիսին Չինաստանից ժամանած բեռնատար ինքնաթիռով: ՀՀ են բերուել նաեւ հեղուկ թթուածնային համակարգերը՝ Սպիտակի, Արտաշատի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Նորքի Ինֆեկցիոն ԲԿների համար: Այդ գնումները իրականացուել են պետական ամավարկի միջոցներով (https://hetq.am/hy/article/118564 , մատչում՝ 09.12.2020ին): 2020 Դեկտեմբերի 26ին ՀՀ առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեանը տեղեկացրել է, որ Երեւան է բերւում Չինաստանից թթուածնի արտադրութեան 4 մեծ կայան՝ բժշկական կենտրոնների համար (https://armeniasputnik.am/society/20201226/25907260/chinastanic-hayastan-e-galis-ttvatsni-artadrutyan-kayanneri-hertakan-khbaqanaky.html (մատչում՝ 09.12.2020):

[44] «Բժշկական սարքեր եւ պարագաներ՝ կորոնավիրուսային հիւանդութեան դէմ պայքարում», 30.12.2020, https://www.moh.am/#1/3462 (մատչում՝ 30.12.2020):

[45] «Եւրոպական Միութիւնը յատկացնում է յաւելեալ 24 մլն. եւրո դրամաշնորհ՝ աջակցելու Հայաստանում Քովիդ-19 համավարակի դէմ պայքարին», https://www.gov.am/am/news/item/14957/ (մատչում՝ 30.12.2020):

տի 12ին Ադրբեջանում գրանցուեց համավարակից առաջին մահը՝ Իրանից վերադարձած մի կին: Յետագայում վարակուածները եկել են Իտալիայից: Մարտի 14ին Վրաստանը փակեց Ադրբեջանի հետ ցամաքային սահմանը, Մարտի 15ին Ադրբեջանը փակեց Թուրքիայի հետ սահմանը: Երկրի ներսում աստիճանաբար ներդրուեցին առողջամեկուսացման միջոցներ, դադարեցուեցին զանգուածային միջոցառումները, փակուեցին մշակութային կենտրոնները: Պաշտօնական առողջամեկուսացումը մտցրուեց Մարտի 24ին:

2020 Յունիսի կէսերին համավարակով պայմանաւորուած վիճակը Բաքւում դեռեւս հակասական էր: Այդ շրջանում վիճակագրական տուեալներով Ադրբեջանում ծաւալները զգալիօրէն քիչ են եղել, քան ՀՀում. մօտ 8-9 հազար դէպք է գրանցուել եւ միքանի տասնեակ մահ: Ըստ հրապարակուած տուեալների՝ Ադրբեջանի կառավարութիւնը կիրառել է խիստ սահմանափակումների քաղաքականութիւն, յատկապէս Շաբաթ-Կիրակի օրերին կիրառելով խստագոյն պարետային ժամ՝ Ուրբաթ երեկոյից:

Տարօրինակ է, որ Ադրբեջանը մուտքի հնարաւորութիւն չի տուել միքանի հարիւր ադրբեջանցիների, որոնք ՌԴ տարբեր քաղաքներից հաւաքուել են Դաղստանի սահմանին եւ ցանկացել են անցակէտով վերադառնալ Ադրբեջան: Նոյնիսկ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը եւ արտաքին գործերի նախարար Սերգէյ Լաւրովը զանգահարել են իրենց պաշտօնակիցներին, սակայն ապարդիւն:

Իրականում Թուրքիայի հրահրմամբ Բաքուն, փորձելով օգտուել իրավիճակից, քաղաքական որոշ ճնշումներ է բանեցրել Մոսկուայի դէմ, քանի որ Ադրբեջանին սահմանակից եւ ՌԴ մաս կազմող Դաղստանում համավարակը եղել է բարդ վիճակում[46]:

Բոլոր դէպքերում հիմք ընդունելով այդ պետութեան ոչ-թափանցիկ աշխատաոճը եւ բռնապետական համակարգը՝ որոշ վերապահումով պէտք է մօտենալ Բաքուի հրապարակած վիճակագրական տուեալներին:

Նշելի է, որ Ադրբեջանի առանձնայատկութիւնն ի ցոյց էր դրւում նախ ժահրի առողջամեկուսացման դէմ պայքարում իշխանութիւնների ունեցած յաղթանակների մասին լուրերով: Յայտնւում էր, որ հսկայական նիւթական միջոցներ են յատկացուել աշխարհին: Նաեւ՝ նախագահի կողմից ընդգծւում էր «գոյութիւնը հինգերորդ շարասեան եւ դաւաճանների, որոնք փող են ստանում արտասահմանից», այսինքն՝ նրանք, ովքեր դէմ են գործող վարչակարգին[47]: Այս հռետորաբանութիւնը տարածուած էր Ադրբեջա-

[46] https://www.lragir.am/2020/06/16/556345/ (դիտվել է՝ 20.12.2020):

[47] Ильхам Алиев обвинил «пятую колонну» в том, что она «хочет уничтожить Азербайджан», используя коронавирус (Իլհամ Ալիեւը «հինգերորդ շարասեանը» մեղադրեց համավարակ օգտագործելով «Ադրբեջանը ոչնչացնելու ցանկութեան մեջ») https://www.currenttime.tv/a/azerbaijan-coronavirus-opposition-isolyation/30497605.html (մատչում՝ 14.09.2020):

նում եւ ոչ-ուղղակիօրէն կապուած է համավարակի հետ: Իրականում ստեղծուած իրավիճակն իշխանութիւններն օգտագործում էին եւ են՝ հասարակութեան մէջ իրենց դիրքերն ամրապնդելու եւ այլախոհութիւնը ճնշելու համար:

Բացի այդ, համավարակի բռնկումը համընկաւ նաւթի համաշխարհային գների կտրուկ անկման հետ: Հաշուի առնելով Ադրբեջանի տնտեսութեան մէջ նաւթի արտահանման էական դերը, նաւթի եկամուտների անկումը լուրջ մարտահրաւէր է դառնում այդ երկրի համար: Այնուամէնայնիւ, Ադրբեջանի կուտակած պաշարները թոյլ են տալիս խուսափել տնտեսական անկումից, եւ դրա տեղեկատուական առանձնայատկութիւնը իշխանութիւններին հնարաւորութիւն է տալիս չէզոքացնել հասարակութեան արձագանգը կենսամակարդակի անկում գրանցելու դէպքում: Այսպիսով, նոր եւ կտրուկ փոփոխութիւններ տեղի չունենալու դէպքում, դժուար թէ կարելի է ակնկալել համավարակի լուրջ ազդեցութիւն Ադրբեջանի քաղաքական համակարգի վրայ: Ասուածը փաստարկւում է նաեւ գործնականում, երբ 2020ի Սեպտեմբերի 27ին Ադրբեջանը սանձազերծեց պատերազմ Արցախի Հանրապետութեան դէմ եւ Թուրքիայի անմիջական մասնակցութեամբ եւ աջակցութեամբ ռազմակալեց Արցախի տարածքի մեծ մասը:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այն տարբերւում է հարեւան երկրներից համեմատաբար աւելի փոքր թուով դէպքերով, տարածման արագութեամբ եւ, որպէս արդիւնք, մահուան դէպքերով: Վրաստանի կառավարութիւնն ի սկզբանէ լուրջ ընդունեց համաճարակի տարածման հետ կապուած վտանգները: Վրաստանի գործողութիւնների արդիւնաւէտութիւնն աննկատ չմնաց միջազգային մամուլի կողմից[48]:

Յունուարի 26ին, նոյնիսկ Չինաստանի սահմաններից դուրս ժահրի նկատելի տարածման մասին յայտնի դառնալուց առաջ, Վրաստանի իշխանութիւնները միջոցներ ձեռնարկեցին անցակէտերում ուղեւորներին վերահսկելու համար: Շատ արագ, համավարակի տարածման տեսանկիւնից հաւանական վտանգ ներկայացնող երկրների հետ երթեւեկութեան կապերը չեղեալ յայտարարուեցին. Յունուարի 28ին՝ Չինաստանի, Փետրուարի 23ին՝ Իրանի, եւ Մարտի 6ին՝ Իտալիայի հետ: Ըստ էութեան Իտալիայի հետ կապի ընդփոյթ դադարեցումը դարձաւ համավարակի նուազագոյն տարածման հիմնական պատճառը Վրաստանում:

Մարտի 21ին, երբ վարակուածների թիւը հասնում էր 48ի, երկրում արտակարգ դրութիւն յայտարարուեց: Քաղաքային երթեւեկութիւնն ու երկա-

---

[48] «COLCHIS: Why is Georgia succeeding with the coronavirus where many Western countries are failing?», Intellinews, March 22, 2020, https://www.intellinews.com/colchis-why-is-georgia-succeeding-with-the-coronavirus-wheremany-western-countries-are-failing-179039/ (մատչում՝ 20.09.2020):

թուղային հաղորդակցութիւնն ամբողջութեամբ կասեցուեց, անձնական եւ հանրային ինքնաշարժներով թոյլատրւում էր երթեւեկել երեք հոգուց ոչ-աւելի: Երեք հոգուց աւելի արգելուած էր հաւաքուել:

Շատերը քննադատում էին կառավարութեան կանոնների խստութիւնը: Մինչդեռ առողջապահական հարցերի փորձագէտներն, այդ թւում՝ կառավարութեան քննադատները, կարծում էին, որ երկրում վարակի դէմ պայքարի առաջին փուլը շատ լաւ է անցել եւ առաւելագոյնս ժամանակ է շահուել, ինչը շատ կարեւոր է:

Ըստ մասնագէտների՝ առաջին փուլում աշխատել է երեք գործօն.-

Նախ, Վրաստանը սպառնալիքն ի սկզբանէ լուրջ է ընդունել եւ յոյսը չի դրել թէ՝ «սովորական գրիպի» հետ գործ ունի: Այս դէպքում այն փաստը, որ Վրաստանն աղքատ երկիր է բաւականին խնդրայարոյց առողջապահական համակարգով, որոշակի առումով նրա օգտին էր: Այլ կերպ ասած, աշխատել է «եթէ նման բան է տեղի ունենում Իտալիայում, ի՞նչ է լինելու մեզ մօտ» բանաձեւը, այդ պատճառով էլ երկիրն անմիջապէս անցել է համաճարակից պաշտպանուելուն:

Երկրորդ, ողջ գործընթացի ժամանակ կառավարութեան անդամները երկրորդ պլան են մղուել, այդ թւում՝ առողջապահութեան նախարարը: Կառավարութիւնը գործընթացը վստահել է համաճարակաբաններին, հիւանդութիւնների վերահսկման կենտրոնի մասնագէտներին:

Երրորդ, կարեւոր գործօնը Թբիլիսիի արուարձանում գտնուող Լուգարայի անուան գիտական կենտրոնն է: Հենց այս տարրալուծարանում է անցկացուում համավարակի PCR–քննարկումը: Այս ժամանակակից տարրալուծարանի պատրաստուածութիւնն է մեծ մասամբ հենց պայմանաւորել այն, որ զսպման փուլը Վրաստանում այդքան երկար է տեւել: Տարրալուծարանի աշխատակիցներն աշխատում են օրը 24 ժամ երեք հերթափոխով: Նմուշի մշակումն ու պատասխանի ստացումը տեւում է 4-5 ժամ, եւ այդ պատասխանը ճշգրիտ է:

Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելի Դեգնանի գնահատմամբ՝ «*Վրաստանն առաջատարն է արձագանգման առումով, եւ ես կարծում եմ, որ վրացիները պէտք է շատ հպարտանան նրանով, որ հիւանդութիւնների վերահսկման կենտրոնը Լուգարայի լաբորատորիայի հետ միասին յաջողութեան է հասել ...: Դա շատ տպաւորիչ է*»[49]:

Քննարկելով տնտեսական հարցերը՝ նշելի է, որ իրականում Վրաստանի համար սահմանների փակումը աւելի ցաւոտ էր, քան Ադրբեջանի

---

[49] «Վրաստանը եւ կորոնավիրուսը. յաջողութիւ՞ն, թէ՞ բախտ», https://jamnews.net/am/%D5%BE%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%BD-%D5%A2%D5%B8%D6%82%D5%AA%D5%B8%D6%82%D5%B4/ (մատչում՝ 20.11.2020):

եւ ՀՀի դէպքում. երկրի տնտեսութիւնն առաւելապէս կախուած է զբօսաշրջութիւնից: Որպէս տնտեսական գործունէութեան պահպանման եւ քաղաքացիների առողջութեան միջեւ փոխզիջման մաս, որն անխուսափելի է առողջամեկուսացման միջոցառումների ներդրմամբ, Վրաստանը միանշանակ անցել է վերջինիս կողմը[50]: Մարտի 14ին Վրաստանը փակեց ՀՀի եւ Ադրբեջանի հետ սահմանները, Մարտի 18ից սահմանները փակ էին բոլոր օտարերկրացիների համար, Մարտի 20ին նա փակեց օդային տարածքը: Ի սկզբանէ առողջամեկուսացում է մտցուել սահմանափակ ժամանակահատուածով (մէկ շաբաթից երկու), այդ միջոցառումները երկարացուել են, եւ դրանք չեն չեղարկուել մինչեւ Ապրիլի կէսը:

Մարտի սկզբին փակուեցին ուսումնական հաստատութիւնները, ինչպէս նաեւ առեւտրային կենտրոնները: Արտակարգ դրութիւն էր յայտարարուել Մարտի 21ին, բայց ի տարբերութիւն որոշ այլ երկրների, այդ թւում՝ հարեւանների, այն չէր նախատեսում մամուլի ազատութեան սահմանափակումներ: Մարտի 30ին սահմանուել է պարէտային ժամ եւ բարձր տուգանքներ՝ առողջամեկուսացումը խախտելու համար (մօտ 1000 դոլար՝ առաջին խախտման եւ մինչեւ ազատազրկում՝ կրկնելու դէպքում): Բացի այդ, այն վայրերում, որտեղ յայտնի է դարձել ժահրի անվերահսկելի տարածման մասին, խիստ տեղական առողջամեկուսացում է սահմանուել (Լենտեխսկի, Մառնէուլսկի եւ Բոլնիսի շրջաններ):

Յարութեան տօնի եւ սահմանափակումների հակասութիւնների վերաբերեալ վարչապետ Գիորգի Գախարիան հաւատացեալներին յորդորել էր տանը աղօթել, բայց վրաց պատրիարք Իլիա Երկրորդը յայտարարել էր, որ եկեղեցու դռները հաւատացեալների առաջ չեն կարող փակուել: Սակայն կառավարութեան համար ցանկալի չէր եկեղեցու հետ հակասութիւնները, որի համար էլ ներքին գործերի նախարարը յայտնել է, որ համաձայնութիւն ձեռք կը բերուի, կանոնները չեն խախտուի: Բայց... հաւատացեալները հաղորդութիւն են ստացել ընդհանուր սպասքով:

Խնդիրն այն էր, որ Վրաց Ուղղափառ Եկեղեցին կտրականապէս հրաժարւում էր հետեւել համաճարակաբանների խորհրդին եւ կրօնական արարողութիւններն անցկացնել առանց հաւատացեալների, փակ դռների ետեւում: Ծաղկազարդի տօնին վրացական բոլոր եկեղեցիներն ու տաճարները լեփլեցուն էին[51]:

---

[50] Richard Baldwin, and Beatrice Weder di Mauro (eds.), *Mitigating the COVID Economic Crisis: Act Fast and Do Whatever*, London, Center for Economic Policy Research, 2020 (file:///C:/Users/Admin/Downloads/COVIDEconomicCrisis%20(3).pdf (մատչում՝ 20.09.2020):

[51] Հրաչ Մելքումեան, «Սբ. Յարութեան տօնին վրացի հաւատացեալները հնարաւոր է գիշերեն եկեղեցում՝ պահպանելով պարէտային ժամը», 10.04.2020, https://www.azatutyun.am/a/30544664.html (մատչում՝ 20.12.2020):

Համավարակը չտարածելու նպատակով Ապրիլի 15ից տասն օրով արգելուեց ելումուտը երկրի չորս խոշոր քաղաքներ՝ Թբիլիսի, Քութայիսի, Բաթումի եւ Ռուսթաւի[52]: Ապրիլի 20ի դրութեամբ՝ երկրում վարակման 399 դէպք կար: Հիւանդներից չորսը մահացել էին, 86ն՝ ապաքինուել: Իր հարեւանների, ինչպէս նաեւ եւրոպական այլ երկրների համեմատ՝ Վրաստանում իրօք աւելի քիչ մարդ է հետազօտուել: Ապրիլի 8ի տուեալներով Վրաստանում, ընդհանուր առմամբ, 3271 առողջաքննարկում է արուել, այսինքն՝ 820 քննարկում մէկ միլիոն բնակչութեան հաշուարկով (նոյն ժամանակահատուածում ՀՀում մէկ միլիոն բնակչութեան հաշուարկով 1840 առողջաքննարկում է եղել, իսկ Ադրբեջանում՝ 5257):

Վրաստանը, հետեւողականօրէն որդեգրուած կոշտ միջոցառումների արդիւնքում, հասաւ իր տարածքում համավարակի ճնշմանը, որի շնորհիւ նա աւելի վաղ սկսեց բացել իր սահմանները զբօսաշրջիկների առաջ եւ ամրապնդեց իր դիրքերը[53]: Դա ունի նաեւ այլ պատճառներ: Նախ՝ անհաշտ ընդդիմութեան առկայութիւնը վրացական կառավարութեանը նոր սխալներ թոյլ տալու իրաւունք չտուեց: Ուստի իշխանութիւնները հենց *սկզբից* ցուցաբերել են պատասխանատուութիւն: *Երկրորդ*, համավարակի իրավիճակն իշխանութիւններին հնարաւորութիւն ընձեռեց ընտրութիւններից միքանի ամիս առաջ ընտրողների աչքում իրենց մասին հանրային կարծիքը բարելաւելու, եւ իշխանութիւններն օգտուեցին այդ հնարաւորութիւնից:

Սակայն աշնանը Վրաստանում իրավիճակի որոշ փոփոխութիւն տեղի ունեցաւ: Հոկտեմբերի 26ի դրութեամբ, Վրաստանում արձանագրուել էր վարակման 1872 նոր դէպք, ընդհանուր դէպքերի քանակը երկրում 30,303 էր, վարակը յաղթահարել էր 11,370 մարդ: Վարակից մահացել էր եւս 14 մարդ, ընդհանուր՝ 215: Առողջամեկուսացման գօտում է գտնւում 3769, հիւանդանոցային վերահսկողութեան տակ է 3832 մարդ: Հիւրանոցային պայմաններում բուժւում է 2249 հիւանդ[54]: Վրաստանում Հոկտեմբե-

---

[52] Գէորգ Ստամբոլցեան, «Վրաստանը մտել է կորոնավիրուսի լայնամասշտաբ ներքին տարածման փուլ, յայտարարում է երկրի վարչապետը», 15.04.2020, https://www.azatutyun.am/a/30554462.html (մատչում՝ 20.12.2020):

[53] Isabelle Khurshudyan, "On the Black Sea, Georgia rebrands as a holiday haven from the pandemic," *Washington Post*, May 30, 2020 (https://www.washingtonpost.com/world/europe/on-the-black-sea-georgia-rebrands-itself-as-a-holiday-haven-from-the-pandemic/2020/05/29/a41ffd0e-9f6d-11ea-be06-af5514ee0385_story.html (մատչում՝ 20.09.2020):

[54] «Վրաստանում արձանագրուել է կորոնավիրուսի 1872 նոր դէպք», https://www.aliq.ge/vrastanum-ardzanagrvel-e-koronavirusi-1872-nor-depkh-hoktemberi-26/ (մատչում՝ 20.11.2020):

րի 29ին համավարակով յայտնաբերուած դէպքերի թիւը աւելացել էր 1709ով, մահացել էր եւս 20 մարդ[55]:

Ստորեւ բերուած աղիւսակում ներկայացուած է 2021ի Յունուարի 21ի դրութեամբ Այսրկովկասի երկրներում տիրող իրավիճակը, որից պարզ է դառնում համավարակի արդէն նոր սրացումները Վրաստանում: Ակնյայտ է, որ այդ երկիրը մտնում է համավարակի տարածման առումով մի իրավիճակ, որն արդէն վտանգաւոր է ՀՀի համար: Ըստ այդմ՝ Վրաստանը մէկ միլիոն բնակչութեան դէպքերի թուով աշխարհում 12րդն է, ՀՀն՝ 19րդը, Ադրբեջանը՝ 75րդը: Կարելի է փաստել, որ վրացական իշխանութիւնները թուլացրել են կամ նախկին հետեւողականութիւնը փոխարինել որոշակի մեղմացման քաղաքականութեամբ, որի հետեւանքով էլ տեղի է ունեցել բացասական փոփոխութիւնը:

Վիճակագրութիւն՝ վարակուածներ, մահացածներ, ապաքինուածներ[56]			
	ՀՀ	Ադրբեջան	Վրաստան
Նոր դէպքեր	309	332	1137
Հիւանդներ	165221	228028	251071
Նոր մահեր	+9	+12	+11
Մահեր	3016	3 044	2998
Առողջացել են	153 857	217 617	238 101

Այդուհանդերձ, միանշանակ կարելի է ասել, որ 2020ի կտրուածքով Վրաստանը մնաց համեմատաբար նպաստաւոր վիճակում Այսրկովկասի երկրների շարքում եւ ցուցաբերել է հանրային կառավարման առաւելագոյն օգտակարութիւն:

ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Տնտեսութեան վրայ համավարակի ազդեցութեան վերաբերեալ քննարկումները կը տեւեն երկար ժամանակ: Իսպանական գրիպի համաճարակի օրինակով, որը տեւեց 1918-20, ենթադրւում է, որ համաճարակի

[55] «Վրաստանում կորոնավիրուսով ախտահարուածների թիւը մէկ օրում 1709ով աւելացել է», https://armenpress.am/arm/news/1033173.html?fbclid=IwAR1rXXul6F27MvTmEbNbzZV4DJZZi7ECZCHPBp3isql4492dWHuNopn2fUE 29.10.2020, (մատչում՝ 20.11.2020):

[56] https://jamnews.net/am/%d5%af%d5%b8%d6%80%d5%b8%d5%b6%d5%a1%d5%be%d5%ab%d6%80%d5%b8%d6%82%d5%bd%d5%a8-%d5%af%d5%b8%d5%be%d5%af%d5%a1%d5%bd%d5%b8%d6%82%d5%b4-%d5%b6%d5%b8%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-8/ (մատչում՝ 21.01.2021):

հետեւանքով տնտեսական անկումն աւելի շատ ազդում է երկրների բարեկեցութեան վրայ, քան առողջամեկուսացումը սահմանափակող միջոցառումները[57]:

Նման պայմաններում պետական քաղաքականութիւնը դառնում է փոխզիջում համավարակի տարածումը զսպելու եւ տնտեսական հետեւանքները նուազագոյնի հասցնելու ցանկութեան միջեւ. որքան խստացուեն համավարակը զսպելու միջոցառումները՝ այնքան խորը կը լինի տնտեսական ճգնաժամը[58]: Այսրկովկասի երկրները կատարել են իրենց ընտրութիւնը. յօգուտ համավարակի զսպման՝ տնտեսական կորուստների գնով: Վրաստանն այս առումով ամենահեռուն գնաց, եւ, նախնական գնահատականներով, ամենամեծ վնասները կրեց նախնական փուլում: Ապրիլի 13ին վրացական լարին կորցրել է իր արժէքի 12%ը, Մարտի սկզբին հայկական դրամը կորցրեց 1.8%ը, իսկ ադրբեջանական մանաթը պահպանեց իր ամրացուած փոխարժէքը՝ 1.7AZN /USD[59]:

Ինչ վերաբերում է ընդհանուր տնտեսական իրավիճակին, չնայած Համաշխարհային Բանկը 2020 Ապրիլին վերանայեց իր եւ յունուարեան կանխատեսումները Եւրոպայի եւ Կենտրոնական Ասիայի զարգացող տնտեսութիւնների համար՝ 2.6% աճից մինչեւ 2.8% անկում[60], Այսրկովկասի ոչ մի երկրում Համաշխարհային Բանկը չի կանխատեսել անկում, որն անընդունելի է ՀՀ օրինակով, քանի որ այստեղ առկայ է անկումը:

Աղիւսակ 3[61].- **Համաշխարհային Բանկի տնտեսական կանխատեսումները Այսրկովկասի երկրների համար**						
	2017	**2018**	**2019**	**2020**	**2021**	**2022**
փաստ գնահատական կանխատեսում ՀՆԱի իրական աճ, շուկայական կայուն գներով (նախորդ տարուայ համեմատ%)						
ՀՀ	7,6	5,2	7,6	1,7	4,5	4,7
Վրաստան	4,8	4,8	5,1	0,1	4,0	5,0
Ադրբեջան	0,1	1,5	2,2	-0,2	2,2	2,4
Ընթացիկ ֆինանսական հաշուեկշիռը (ՀՆԱի%)						
ՀՀ	-4,8	-1,6	-0,8	-4,7	-2,7	-2,6
Վրաստան	-3,5	-2,6	-3,3	-5,2	-3,7	-3,2

[57] Sergio Correia, Stephan Luck, and Emil Verner, "Pandemics Depress the Economy, Public Health Interventions Do Not: Evidence from the 1918 Flu," *SSRN Electronic Journal*, 2020. https://doi.org/10.2139/ssrn.3561560 (մատչում՝ 22.09.2020):

[58] Baldwin and di Mauro:

[59] "Currencies," https://www.investing.com/currencies/ (մատչում՝ 28.4.2020):

[60] "Fighting COVID-19. Europe and Central Asia Economic Update. Office of the Chief Economist, Spring 2020," World Bank Group, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/33476/9781464815645.pdf?sequence=5&isAllowed=y (մատչում՝ 23.09.2020):

[61] Նոյն:

Ադրբեջան	-1,3	5,9	8,9	-5,7	-3,2	-2,8

Այնուամէնայնիւ, կան նաեւ աւելի քիչ լաւատեսական կանխատեսումներ Այսրկովկասի երկրների համար: ՀՀ կենտրոնական բանկի հաշուարկների համաձայն՝ երկրի տնտեսութիւնը կ'աճի ընդամէնը ՀՆԱի 0.7%ով[62]: Արժոյթի Միջազգային Հիմնադրամը կանխատեսում է ՀՀ ՀՆԱի 1.5% անկում[63]: Պարզ է, որ պատերազմից յետոյ աւելորդ է խօսել աճի մասին. ընդհակառակը ՀՀն 2021 մուտք գործեց տնտեսապէս բաւականին ցածր ցուցանիշներով:

Fitch վարկանիշը կանխատեսում է Ադրբեջանի ՀՆԱի 4.8% անկում[64], իսկ Վրաստանի բանկի ներդրումային դուստր ձեռնարկութեան ուսումնասիրութեան համաձայն՝ 2020ին վրացական տնտեսութեան հաւանականութեամբ կշռուած աճը բացասական կը լինի՝ -3,5%[65]:

Նաւթի գների անկումը յատկապէս զգայուն կը դառնայ Ադրբեջանի համար, որին բաժին է ընկնում նաւթի եւ գազի հատուածից իր արտահանման եկամուտների շուրջ 90%ը: Համաշխարհային Բանկի կանխատեսմամբ՝ 2019ին 8,9% ամավարկի յաւելուրդից յետոյ, 2020ին Ադրբեջանը կ'ունենայ 5,7% պակասուրդ[66]:

Աղիւսակ 4[67].- **Այսրկովկասում տնտեսական կայունութիւնը համավարակի տնտեսական ճգնաժամի պայմաններում**			
	ՀՀ	Վրաստան	Ադրբեջան
Ներքին վտանգայնութեան հանդէպ դիմացկունութիւն			
Մանրածախ առեւտրի ցնցումները	Բարձր	Բարձր	Բարձր
Աշխատաշուկայի ցնցումները	Միջին	Ցածր	Ցածր

[62] «2020ի ամռան կէսից կը սկսուի Հայաստանի տնտեսութեան աստիճանական վերականգնումը, իրական ՀՆԱի աճը կը լինի 1.7 տոկոս. ՀԲի կանխատեսումը» 11.04.2020, https://medialab.am/57422/ (մատչում՝ 20.09.2020):

[63] "IMF Reaches Staff-Level Agreement on Second Review for Armenia's Stand-By Arrangement, Request for Augmentation," International Monetary Fund, April 9, 2020, https://www.imf.org/en/News/Articles/2020/04/09/pr20140-armenia-imf-reaches-staff-level-agreement-second-review-sba-request-augmentation (մատչում՝ 20.09.2020):

[64] "Fitch Affirms Azerbaijan at 'BB+'; Outlook Negative" www.fitchratings.com/research/sovereigns/fitch-revises-outlook-on-azerbaijan-to-negative-affirms-at-bb-10-04-2020. (մատչում՝ 20.09.2020):

[65] "Covid-19. Impact on Georgian Economy," Galt & Taggart, 25 March 2020, https://galtandtaggart.com/upload/reports/10039.pdf

[66] "Fighting COVID-19. Europe and Central Asia Economic Update":

[67] "Regional Economic Prospects in the EBRD Regions. Covid-19: From Shock to Recovery," EBRD, accessed April 27, 2020, https://www.wb6cif.eu/2020/04/08/regional-economic-prospects-april-2020-covid-19-from-shock-torecovery/ (մատչում՝ 23.09.2020):

Ֆինանսական համակարգի հզօրութիւնը	Բարձր	Բարձր	Միջին
Արտաքին վտանգայնութեան դիմացկունութիւն			
Հումքային ապրանքների գներ	Միջին	Բարձր	Ցածր
Համաշխարհային արժէքային շղթաներ	Բարձր	Բարձր	Բարձր
Զբօսաշրջութիւն	Միջին	Ցածր	Միջին
Դրամական փոխանցումներ	Միջին	Միջին	Բարձր

Ինչպէս արդէն նշեցինք, առողջամեկուսարանից առաւելապէս տուժում են զբօսաշրջային եւ օդանաւային արդիւնաբերութիւնները, որոնք գրեթէ ամբողջութեամբ դադարեցուած են: Եթէ համաշխարհային առեւտրային օդային երթեւեկութիւնը նուազել է 75%ով, ապա սահմանային երթեւեկութեան գրեթէ լիարժէք արգելքի պայմաններում աւելի սուր անկում է նկատւում Այսրկովկասում. Երեւանի եւ Թբիլիսիի օդանաւակայանները կորցրել են երթեւեկութեան 98.5%ը (թռիչքների քանակով), իսկ Բաքուի օդանաւակայանը՝ 94%ը նախորդ ժամանակահատուածի համեմատ մինչեւ միջազգային առողջամեկուսացման սկիզբը[68]: Միաժամանակ, տնտեսական ցուցիչները մատնանշում են զբօսաշրջութիւնը՝ որպէս տարածաշրջանի տնտեսութիւնների ամենաթոյլ կէտերից մէկը:

Իդէպ, ՀՀում նոյնիսկ ներքին զբօսաշրջութիւնն էականօրէն նուազեց, քանի որ շատ քիչ թուով մարդիկ էին գնում այցելութեան յայտնի վայրեր: Մայր աթոռ Ս. Էջմիածինն վերջին տարիներին վերանորոգման աշխատանքների պատճառով եւ դրանից զատ որդեգրեց զանգուածային միջոցառումներ չանցկացնելու քաղաքականութիւն, որպէսզի հնարաւորինս նուազեցնի տարածումը:

Հաշուի առնելով, որ համավարակի առաջին օջախը դարձաւ հենց Էջմիածին քաղաքը՝ Մարտի 15ին փակուեց այդ քաղաքի 27 մուտքերից 24ը: Միւս 3 մուտքերից՝ Վաղարշապատ-Երեւան, Վաղարշապատ-Աշտարակ եւ Վաղարշապատ-Մասիս, մարդկանց ելումուտը իրականացւում էր յատուկ հսկողութեան ներքոյ[69]:

Նշելի է, որ մինչեւ համավարակը՝ վերջին տարիներին, ՀՀն բարելաւում էր իր դիրքերը զբօսաշրջութեամբ աչքի ընկնող երկրների շարքում: 2019ին Համաշխարհային Տնտեսական Ֆորումի զբօսաշրջութեան մրցու-

[68] "Tbilisi International Airport", Flight Radar 24, Statistics, https://www.flightradar24.com/data/airports/tbs/statistics ; "Yerevan Zvartnots International Airport", Flight Radar 24, Statistics, https://www.flightradar24.com/data/airports/evn; "Baku Heydar Aliyev International Airport", Flight Radar 24, Statistics, 2020, www.flightradar24.com/data/airports/gyd

[69] https://www.shantnews.am/news/view/627013.html (մատչում՝ 20.11.2020):

նակութեան աղիւսակում ՀՀն 140 երկրների շարքում զբաղեցրել էր 79րդ տեղը նախորդ տարուայ 89րդի փոխարէն[70]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Համավարակը դարձել է միջազգային յարաբերութիւններում որոշակի գործօն: Այն իր բացասական հետեւանքներն է թողել հասարակական կեանքի գրեթէ բոլոր ճիւղերի վրայ: Համավարակից տուժել են զարգացող երկրների տնտեսութիւնները, իսկ որոշ տարածաշրջաններ ընկղմուել են ընկերա-տնտեսական ճգնաժամերի մէջ:

2. Համավարակը բացայայտել է հանրային կառավարման բնագաւառում բազմաթիւ երկրների քաղաքական ուժերի պատրաստուածութիւնը, կարողութիւնները, արտակարգ կամ ճգնաժամային պայմաններում կառավարում իրականացնելու հմտութիւնները:

3. Համավարակը փորձութեան է ենթարկել Այսրկովկասի փխրուն պետութիւններին՝ դրանց կենսունակութեան եւ նոր մարտահրաւէրների առջեւ ճկունութեան ստուգման կամ դիմացկունութեան տեսանկիւնից: Հաշուի առնելով այս երկրներում ընթացող պետականաշինութեան գործընթացը, որը ԽՍՀՄ փլուզումից յետոյ շարունակւում է արդէն երեք տասնամեակ, համավարակը կարող է դառնալ կարեւոր գործօն երկրների քաղաքական մշակոյթի եւ պետական կառավարման հաստատութիւնների ձեւաւորման գործընթացում:

4. Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմը վնասել է առանց այն էլ համավարակի առաջին փուլը մեծ դժուարութեամբ յաղթահարած ՀՀ առողջապահական համակարգին: Իդէպ, մինչ պատերազմ սկսուելը վարակուածների թիւն Արցախում անհամեմատ քիչ է եղել եւ ըստ էութեան այն փոխանցուել է հազարաւոր մարդկանց դէպի ռազմաճակատ գնալու եւ շփումների աննախադէպ մեծացման հետեւանքով:

5. Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմը հակասել է նաեւ Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան մինչ այդ արած մարդասիրական բազմաթիւ կոչերին: Ենթակառուցուածքների ոչնչացմամբ Արցախում առաջացել է *հումանիտար* եւ առողջապահական աղէտ:

6. Կարելի է փաստել, որ համավարակի դէմ պայքարում ինչ որ չափով յաջողել է Ադրբեջանը ոչ թէ իր առողջամեկուսացման յստակ միջոցառումներով, այլ հիմնականում բռնապետական ճնշումներով լծակներով խիստ միջոցառումների տեսքով: Ըստ էութեան համավարակի դէմ կոշտ

---

70 The Travel & Tourism Competitiveness Report 2019, http://www3.weforum.org/docs/WEF_TTCR_2019.pdf էջ 36:

պայքարն էլ հենց դրա յաղթահարման կարեւոր երաշխիքն է, մինչդեռ ՀՀ իշխանութիւնները այս հարցում գտնուեցին առաւել ժողովրդավար եւ գոնէ մեկնարկի պայմաններում զերծ մնացին խիստ քայլերի կիրառումից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ՀՀ խորհրդարանական եւ արտախորհրդարանական քաղաքական ուժերը պէտք է մշակեն յատուկ ճգնաժամային կառավարման ծրագրեր, որոնք պէտք է համապատասխանեն ե՛ւ համավարակի, ե՛ւ պատերազմի ժամանակ երկիրը կառավարելու պահանջներին:

2. Առողջամեկուսացման եւ նմանատիպ այլ միջոցառումները կազմակերպելու դէպքում անհրաժեշտ է դրանք իրականացնել հաւասարութեան սկզբունքով ե՛ւ մայրաքաղաքում, ե՛ւ մարզերում: Յայտարարութիւնից զատ անհրաժեշտ է անվտանգութեան կանոնների պահպանումը հետեւողականօրէն ապահովել յատկապէս մարզերում:

3. Հաշուի առնել անկանխատեսելիութեան եւ աննախադէպութեան հնարաւոր վարկածն ու վրացական օրինակով ստեղծել հզօր տարրալուծարան-հիմնարկ ՀՀում:

COVID-19 AND THE PROBLEM OF PUBLIC GOVERNANCE IN THE CAUCASIAN STATES

(Summary)

KAREN MKRTCHYAN (K86Mkrtchyan@gmail.com)

The Covid-19 epidemic has to some extent revealed the readiness, capabilities, and management skills in the field of public administration of the ruling political forces of many countries.

The epidemic has become a factor in international relations and has left its negative mark on almost all spheres of public life. The epidemic has affected the economies of developing countries, and some regions are mired in socio-economic crises.

The virus has tested the young, fragile states of the Caucasus in terms of resilience, and especially resilience to new challenges. Given the state-building process in these countries, which has been going on for three decades since the collapse of the Soviet Union, the epidemic has become a major factor in the formation of these countries' political culture and public administration institutions.